ՄԵԿՆՈՒՄ ՓԱՐԻԶ

Ապրիլի 29-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 8.00-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով Մոսկվայի «Շերեմետևո-2» միջազգային օդանավակայանից ուղևորվում է Ֆրանսիա:

Փարիզի «Շառլ դը Գոլ» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորում և բարի գալուստ են մաղթում Փարիզի հայոց առաջնորդական փոխանորդ Տ. Գյուտ եպս. Նագգաշյանը, Փարիզի հայոց Կրոնական Ընկերակցության վարչական խորհրդի ատենապետ տիար Արմեն Բարսեղյանը, ինչպես նաև եկեղեցական վարչության և հոգաբարձության անդամները:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին դիմավորելու և բարի գալուստ մաղթելու էին եկել նաև Ֆրանսիայի ներքին ապահովության մինիստրի ներկայացուցիչ Լամբերը և Ֆրանսիայում Սովետական Միության դեսպանության քարտուղար Տիմոֆեևը:

ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԽԱՉՔԱՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ ԱԼՖՈՐՎԻԼՈՒՄ

Ապրիլի 29-ը, հիրավի, հիշատակելի և անմոռաց օր պիտի մնա Ալֆորվիլի հայկական գաղութի տարեգրության մեջ: Այդ օրը տեղի ունեցավ Ապրիլյան Եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցված խաչքար-հուշարձանի պաշտոնական բացումը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի և Ֆրանսիայի հանրային ապահովության մինիստր և Ալֆորվիլի քաղաքագլուխ Ժոզեֆ Ֆրանչեսկիի:

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետը մեքենաների շարասյունով ուղևորվում է Ալֆորվիլի հայոց Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի, որտեղ սուրբ պատարագ է մատուցում և քարոզում տեղի հայոց հոգևոր հովիվ Տ. Ներսես ծ. վրդ. Բաղուճյանը: Պատարագի սրբական արարողությանը ներկա էին Ֆրանսիայի հայ հարանվանությանց, Ալֆորվիլի, Իսի լե Մուլինոյի, Կլամարի թաղապետական խորհուրդների, Վալ դը Մառնի նահանգապետի ներկայացուցիչները, ինչպես նաև հավատացյալների մի հոծ բազմություն:

Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված խաչքար-հուշարձանի բացումը Ալֆորվիլում

Վեհափառ Հայրապետը և Ալֆորվիլի քաղաքագլուխ Ժոզեֆ Ֆրանչեսկին

Հավարտ եկեղեցական արարողության, ժամը 13-ին, շուրջ երկու հազար հայեր, թափոր կազմած, իրենց մեջ ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Ֆրանսիայի ազգահովության մինիստրին և այլ պաշտոնական անձնավորություններին, կտրելով «Կոմիտաս» փողոցը, ուղևորվում են տեղի «Կառնո» հրապարակը, որտեղ տեղի էր ունենալու խաչքար-հուշարձանի բացման հանդիսավոր արարողությունը: Թափորն առաջնորդում են Ալֆորվիլի հայոց Ս. Մեսրոպ վարժարանի և հայ մշակույթի տան սաները: Հանդիսությունը վարում է Ալֆորվիլի քաղաքագլխի օգնական Արման Նշանյանը, որն իր բացման խոսքից հետո ձայնը տալիս է Ֆրանսիայի հանրային ազգահովության մինիստր, Ալֆորվիլի քաղաքագլուխ Ժոզեֆ Ֆրանչեսկիին, որը հետևյալ ոգեչունչ ճառն է արտասանում:

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԺՈԶԵՖ ՖՐԱՆՉԵՍԿԻԻ ՃԱՌԸ

Չերդ Սրբություն,

Ալֆորվիլ քաղաքն այսօր կատարում է իր ազնիվ պարտականությունը. այս է՝ քարի մեջ հավերժացնել հիշատակը մեր մեկ ու կես միլիոն եղբայրների, որոնք խժդժորեն կոտորվեցին 1915 թվականի գարնանը Թալեաթ փաշայի հորդաների կողմից:

Ինչո՞ւ է տեղի ունենում այս արարողությունը Ալֆորվիլում: Որովհետև այստեղ՝ Սենա և Մառն գետերի երկու ձյուղերի միջև է, որ եկան ապաստան գտնել և մինչև օրս էլ ապրում են Մեծ Եղեռնից ճողոպրած հայերն ու նրանց հետնորդները: Որովհետև այստեղ ապրող շատ կենսունակ հայկական համայնքը իր դրոշմը դրեց մեր քաղաքի վրա, և նա այսօր հանդիսանում է ֆրանսահայության կենդանի խորհրդանիշը: Ալֆորվիլը բաց արեց նրանց իր թևերը, հայերը բաց արեցին նրանց իրենց սիրտը: Ես հաճույքով եմ հաստատում այս բանը. մեկ մոտ համերաշխությունը կատարյալ է, բարեկամությունը՝ անվերապահ, իսկ Հայաստանի կավակների նկատմամբ հարկացողությունը՝ ընդհանուր, սկսած ամբողջ բնակչությունից մինչև այն անձը, որը կոչված է վարելու այս քաղաքի ճակատագիրը:

Ահա թե ինչու Ալֆորվիլի հայկական համայնքը կարողացավ մեծ հաջողությամբ բարգավաճել այստեղ, մերվել հասարակական և ազգային կյանքին՝ պահպանելով հանդերձ իր հազարամյա մշակութային արժեքներն ու այն հրաշալի ավանդույթները, որոնք ձևավորված են իր ժողովրդի հանճարով: Արդարև, ես միշտ նկատել եմ, որ հայկական համայնքը իր ոգուն հավատարիմ մնալով է, որ կկարողանա միանգամայն լիովին իրագործել ինքն իրեն, ճառագայթել և իր լավագույն բաժինը բերել այս քաղաքի ծաղկումին՝ իր թանկագին հարստություններով նպաստավորելով ինչպես մեր քաղաքը, այնպես էլ Ֆրանսիան: Դրա համար է, որ ես ոչինչ չեմ խնայել՝ Ալֆորվիլի հայերին տալու համար բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են նրանց ազգային ինքնուրույնության զարգացման համար: Բարեկամությունը, անկեղծ սերը, որ ես տածում եմ նրանց նկատմամբ, եղել է միշտ իմ նախաձեռնությունների հզոր լծակը:

...Այդ բոլորի վրա ավելանում է անձնական այն պայքարը, որ ես մղում եմ Ալֆորվիլի հայերի հետ արդեն երկար ժամանակից ի վեր՝ գիտակցել տալու համար աշխարհին 1915 թվականի ջարդերի ահավիրքը և համամարդկային խղճից ձեռք բերելու օրինական հաստատում:

Մենք ամենուրեք պաշտպանել ենք այդ ուղղությամբ կազմակերպված տեղական թե ազգային բոլոր ցույցերը՝ հաճախ նաև մեր մասնակցությունը բերելով դրանց: Ես անձնապես առաջ եմ քաշել ցեղասպանության հարցը ֆրանսիական պառլամենտում և իր պատմության մեջ առաջին անգամ լինելով հընչեցրել եմ Հայաստան բառը Բուրբոնների պալատի սրահում:

Այսօրվա նախաձեռնությունն արձանագրվում է այդ բոլոր գործերի շարքում: Ողջ հայկական համայնքը և ես ինքս ցանկացանք, որ անմահանա այստեղ Օսմանյան կայսրության կողմից հալածված և սպանված երեխաների, կանանց և տղամարդկանց գողգոթան, որ սրբագործվի հիշատակը մեռելների ու նաև վերապրողների, որոնցից մի քանիսը դեռ մեր մեջ են գտնվում այսօր: Մենք ցանկացանք, որ մեր քաղաքի հենց այս թաղամասում, ուր հյուրընկալվեցին ջարդերից ճողոպրած առաջին հայերը, վերհիշեցվի բոլորին այն քստմնելի արարքը, որ սկզբնաղբյուրը հանդիսացավ ժամանակակից հավաքական բոլոր ոճիրների: Մենք ցանկացանք, որ միասնական ջանքերի արդյունքը եղող մի հուշարձան կանգնեցնելով, հայկական համայնքը և մեր քաղաքը արտահայտեն իրենց ուժեղ կամքը անցյալի հիշողությունը միախառնելու ապագայի կառուցմանը:

...Քաջ գիտակցելով, թե ինչ է ներկայացնում այս հուշակոթողը, մենք միաձայնությամբ որոշեցինք, որ այն իր մեջ ներառնի մի խաչքար: Խաչքարերը, կրելով իրենց մեջ գաղափարական և թեմատիկ բոլոր հարցերը, հանդիսանում են հայ կյանքի զարգացման և միաժամանակ նրա շարունակականության, նրա ավանդությունների և հայրենսիրության ամենակատարյալ արտահայտությունը: Նրանք սերտորեն կապված են երկրի պատմության հետ: Ուստի և մենք կատարեցինք ամենախելացի ընտրությունը, առավել ևս որ մեր այս խաչքարը, ուր արմատավորված է ձեր քաղաքակրթությունը, տաշված է ձեր երկրի քարի մեջ: Գերագույն ուրախություն է մեզ համար, որ այն մեզ նվիրել է Նորին Սրբություն Վազգեն Առաջինը, որն իր այս ժեստով ուզում է հիշեցնել մեզ այն բարյացակամ ուշադրությունը, որ նա մշտապես ցուցաբերում է մեր քաղաքի հանդեպ: Մենք երբեք պիտի չկարողանանք ըստ ամենայնի արտահայտել Նրան մեր խորագոյն երախտագիտությունը:

Մենք կամենում ենք նաև մեր շնորհակալությունը հայտնել այն բանվորներին, որոնք ձեռնամուխ եղան հուշարձանի տեղադրման աշխատանքներին: Բոլորն էլ աշխատեցին անշահախնդրորեն և սիրով, այն գիտակցությամբ, որ դրանով մասնակցում են մեր դարի առաջին մեծ եղեռնագործության զոհերի հիշատակը վերապրեցնելու և հարգելու աստվածահաճո գործին: Քանզի դեպի այդ մարդիկ, դեպի ծրագրված անխիղճ մի բնաջնջման զոհերն է, որ գնում են իմ մտածումները այսօր, ծրագիր, որ գործադրվեց ամենադաժան վայրագություններով, որոնք անպատվեցին մարդկությունը և ընդմիշտ մնացին մարդկային ցեղի ամենամեծ ամոթը: Կլեմանսոն, Ժան Ժորեսը, Անատոլ Ֆրանսը, Շառլ Պեգին, Ռոմեն Ռոլանը և շատ ուրիշներ հրապարակավ պարսավեցին այդ ոճիրը և բերեցին իրենց վկայությունը, փաստեր, որ ոչ ոք իրավունք չունի ուրանալու: Մշակութային փոքրամասնությունների իրավունքը, նրանց ինքնության, նրանց տարբերության իրավունքը պայմանավորված է նրանց պատմության տարբերությամբ: Իսկ այսօր հայ ժողովուրդը զրկված է այդ պատմությունից հենց նրա համար, որ թուրքական կառավարությունը, մերժելով ընդունել 1915 թվականի ցեղասպանությունը, ջնջում է Հայաստանի պատմական իրականությունը:

Ահա թե ինչու ֆրանսիական կառավարությունը, հարգելով իր պարտավորությունները, ջանք չի խնայել, որպեսզի առաջ ընթանա այն դատը, որ այնքան մոտ է մեր սրտին և մեր սրտին. դա միջազգային հասարակության կողմից ճանաչումն է 1915 թվականի ցեղասպանության:

Ֆրանսուա Միտերանը, առանց որևէ երկդիմության, հաստատել էր, որ հայ ժողովուրդը չպետք է մոռացության մատնվեր պատմության կողմից. «Որպես ֆրանսիական Հանրապետության պրեզիդենտ,—հայտարարել էր նա 1981 թվականի ապրիլի 23-ին,—ես պիտի հրահանգեմ ՄԱԿ-ի մեր ներկայացուցիչներին, որպեսզի հայերի ցեղասպանության մասին պատմական ճշմարտությունն ոչինչ թաքցված չմնա»:

Այդ օրվանից հայտնի է բոլորիդ այն կարևոր դերը, որ կատարեցին Ֆրանսիայի ներկայացուցիչները Միավորված Ազգերի Կազմակերպությունում, որպեսզի վերջապես իր վախճանին հասնի ցեղասպանության մասին պատրաստվող զեկուցագիրը: Ճնշումների տակ ի գործ դրված ինտրիգներ, իրավաբանական սնամեջ փաստարկումներ ու ճամարտակություններ տևապես ձգձգեցին այդ զեկուցագրի ընդունումը ահա գրեթե 14 տարուց ի վեր: Ներկայումս, շնորհիվ մասամբ ֆրանսիական կառավարության ջանքերի, նշանակվել է մի նոր զեկուցագրող:

Մենք գիտենք, թե ինչպիսի հույսեր է կապել հայ հասմայնքը ցեղասպանության հարցի առնչությամբ Միավորված Ազգերի Կազմակերպության աշխատանքների այս նոր առաջընթացի հետ: Ուստի, հետևողական ուշադրությամբ է, որ (վստահ եղեք դրանում) Ֆրանսիան, համաձայն Հանրապետության պրեզիդենտի ստանձնած պարտավորությունների, կորավիգ պիտի կանգնի այդ նախաձեռնությանը: Հարկավոր է, որ միջազգային իրավագետ մարմինները դադարեն իրենց անշարժության և քաջության պակասի ապացույցը տալուց: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, նա չի կարող մեղսակից լինել մի նոր ձախողանքի: Լռության դավադրությունը չի կարող արդարացվել: Բոլոր նրանց, ովքեր համառում են լռությամբ քողարկել 1915 թվականի ջարդերը, մենք ասում ենք համոզումով. «Չափե՛լ եք արդյոք ձեր սխալի ծանրությունը, ձեր բռնած դիրքը ոչ միայն չի խաղաղեցնում կրքերը, այլ, ընդհակառակն, բորբոքում է դրանք»:

Ֆրանսիական կառավարության համար հարցը պարզ է: Ինչպես Ազգային Ժողովում նա հայտարարեց՝ «ֆրանսիական կառավարությունը ափսոսանք է հայտնում ներկա թուրքական իշխանությունների դիրքորոշման համար, որոնք հակառում են 1915 թվականի իրադարձությունները նկատել ոչ թե որպես մի ցեղասպանություն, որ նպատակամղված էր բնաջնջելու Արևելյան Անատոլիայի հայ ազգաբնակչությունը, այլ որպես ռազմական բանակի հարձակողականին զուգընթաց հայերի կողմից բարձրացված մի ապստամբության ճնշում»: «Օսմանյան կայսրության մեջ ապրող հայերը դարձան ցեղասպանության զոհեր: Փաստերը փաստեր են, և ոչ ոք ի զորու չէ դրանք այլափոխելու կամ մոռացնել տալու»:

Ցեղասպանության այս հանդիսավոր ճանաչումը վերահաստատվեց մեր երկրի պետական բարձրագույն իշխանությունների կողմից: Շուրաքանչյուր ոք հիշում է դա: Այս տարվա հունվարի 6-ին, հայերի Ծննդյան տոնի առթիվ, այցելություն տալով Իսերի նահանգի հայկական համայնքին, ֆրանսիական Հանրապետության պրեզիդենտը հանդիսավորապես հայտարարեց. «Հնարավոր չէ ջնջել ձեզ հարվածած ցեղասպանության հետքը: Պետք է դա արձանագրվի մարդկանց հիշողության մեջ: Պետք է որ այդ եղեռնագործությունը կարողա-

նա երիտասարդների և փոքրերի համար ծառայել որպես դաս և միաժամանակ որպես վերապրելու կամեցողություն, որպեսզի ժամանակի հոլովույթի մեջ մարդիկ զգան, որ ոգեկան արժեքներով հարուստ այս ժողովուրդը անցյալին չի պատկանում, նա ավելի պատկանում է ներկային և ունի ապագա»:

Այսպես, առաջին անգամ լինելով, մի պետության ղեկավար արդարություն էր անում հայ ժողովրդին ու նրա պատմությանը: Դրանում ես տեսնում եմ մի հրավեր՝ ուղղված մյուս պետությունների ղեկավարներին, որպեսզի վերջապես դադարի լռության անհանդուրժելի դավադրությունը:

Ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակի վրա հայկական դատին ի նպաստ Ֆրանսիայի գործադրած տևական ջանքերը հանդիսանում են վկայությունը այն խոր բարեկամության, որը մեզ միացնում է իրար: Հանուն այդ բարեկամության է նաև, որ մենք մերժում ենք ամեն արարք, որ դիմապեղծում է ձեր դատը: Եվ հենց նրա համար, որ ձեր բարեկամներն ենք, առանց երկդիմության դատապարտում ենք բոլոր նրանց, ովքեր, կույր կանխամտածման ուղին բռնելով, չեն վարանում սառնասրտորեն պատճառ դառնալ անմեղ զոհերի մահվան՝ սերմանելով ցավ ու վիշտ և ապա նաև ատելություն, համատարած մի ատելություն, որ իր սաղմի մեջ կրում է—հարկավոր է զգուշանալ դրանից—ճակատագրական մի չարիք՝ հակահայության չարիքը:

Ահա թե ինչու մենք մերժում ենք բռնությունը որպես արդարության միջոց, որովհետև չկա և չի կարող լինել լավ բռնություն, օրինավոր բռնություն: Բռնությունը դատապարտելի է ամենուրեք, իր բոլոր ձևերի մեջ. նա չի կարող վկայակոչվել որևէ դատի համար, ինչքան էլ ազնիվ լինի այդ դատը: Ոչ ոք չի կարող այն պահանջել, որովհետև բռնությունը օրինականացնել իր համար՝ նշանակում է այն թույլատրել նաև ուրիշների համար, և կամ նշանակում է ասել, որ մենք ենք միայն, որ իրավացի ենք: ...Այո՛, կատարել ինքդ նույն բանը՝ մեքրագործելու համար ուրիշի վատ արարքը, միանգամայն անընդունելի է և անհամատեղելի, քանի որ դրանով իսկ դա արդարացնում է ուրիշի արարքը, նաև՝ գալիք վրեժխնդրությունը:

Սիրելի հայ բարեկամներ, խնդրում եմ ոչ ոքի խաբեություններին զոհ չդառնաք: Ձեր դատը սրբազան է, այն չպետք է եղծվի ու ծառայի այս կամ այն խմբակցությանը կամ ազգին, որոնք բարի առաքյալների դեմքով մոտենում են ձեզ և փորձում ձեզ մղել ինքնասպանության արարքների, բայց որոնց գլխավոր մտահոգությունն է գործիք ծառայեցնել ձեզ՝ պաշտպանելու համար ամենից առաջ և բացառապես իրենց շահերը:

Ես գիտեմ, որ հայերը պատասխանատու և ջրջահայաց մարդիկ են և հանուն իրենց ազնիվ պայքարի՝ որևէ արկածախնդրության մեջ նետվելու փորձության չեն ենթարկվի: Ձեր դատը արդար է, մենք հասկանում ենք ձեր պայքարը, որը կոչ է անում համայն մարդկության խղճին: Ձեր նահատակները արժանի են հատուցման, հատուցում, որ դուք անպայման ձեռք պիտի բերեք մի օր, ես համոզված եմ դրանում, որովհետև չի պատահել բնավ, որ արդար մի դատ չհաղթանակի վաղ թե ուշ:

Իմացեք, որ դուք մենակ չեք: Ձեր դատին համակրում են բազմաթիվ մարդիկ: Նրանցից մեկն էլ ես եմ, որի համակրանքը ամբողջական է: Անդուլ պայքարի, ձեր ցեղի արժեքների նկատմամբ հարգանքի, այլև մարդկային ու ոգեկան օրենքների նկատմամբ հարգանքի միջոցով է, որ դուք պիտի կարողանաք հաղթանակել:

Մի ազգ, ինչպիսին ձեր ազգն է, մի մշակույթ, ինչպիսին ձեր մշակույթն

է, դեռ շատ բան ունեն տալու աշխարհին: Մենք բոլորս դեռ երկար ժամանակ կարիք ունենք սնվելու մեր կյանքի ակունքներից:

Հայաստանում է, որ վերակառուցվեց կործանված աշխարհը: «Ես տեսնում եմ ցամաքը», բացականչեց Նոյը:

Այո, այժմ տեսնենք այդ աշխարհի լույսը:

Ապա բեմ է հրավիրվում Վեհափառ Հայրապետը:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Գերազանցություն տիար նախարար,

Գերաշնորհ եկեղեցական հայրեր և սիրելյալ հոգևոր զավակներ Մեր,

Գոհություն եմ տալիս բարին Աստծուն, որ ինձ շնորհեց այս պահը, գտնվելու ձեր մեջ այս հուշարձանի հանդիսավոր բացման արարողության:

Այս հուշարձանը, որի գլխավոր մասը Սուրբ Էջմիածնից մեր ուղարկած խաչքարն է, այսօր մեկ բոլորիս համար ներկայացնում է երեք խորհուրդ:

Նախ և առաջ նա խորհրդանշում է քրիստոնեական հավատքը հայ ազգի, որ առաքելական դարից սկսյալ առաջիններից եղավ, որ իր սիրտը բացեց Քրիստոսի լույսին: Մեր ժողովուրդը այդ լույսով պայծառակերպեց իր կյանքն ու իմաստավորեց իր պատմությունը դարեր, դարեր շարունակ, և անսասան հավատքով, հաճախ իր կյանքի իսկ գնով պաշտպանեց ու անշեղ պահեց այդ լույսի ջահը Արևելքի դռների առաջ, ընդդեմ հեռու տափաստաններից խուժող ցեղերի, որոնք ալիք առ ալիք գալիս էին հանգցնելու լույսը Քրիստոսի և ազատության:

Քանի՞-քանի անգամներ, մանավանդ վերջին ինը դարերի ընթացքում, խավարեց արևի լույսը Հայոց աշխարհի, սակայն մեր ժողովուրդը իր հոգու լույսով, Քրիստոսի լույսով շարունակեց գոյատևել, միշտ կենդանի ու բարձր բռնած սուրբ ջահը քրիստոնեական քաղաքակրթության և ազատ ապրելու տենչանքի:

Այդ ջահը լուսավորում է նաև այսօր հայ ժողովրդի կյանքի ճանապարհը թե՛ մեր մայր հայրենիքում, թե՛ ի սփյուռս աշխարհի, որ ապրում են մեր զավակները համախումբ, մեր առաքելական մայր Եկեղեցու կամարների տակ, Սուրբ Էջմիածնի տիրավանդ օրհնությամբ:

Այս հուշարձանը կետեղված է այստեղ ի հիշատակ հայ ազգի մոտ երկու միլիոն նահատակների, որոնք զոհ գնացին առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Արևմտյան Հայաստանում, նահատակություն, որ պատմության հորիզոնի վրա հանդիսանում է առաջին ցեղասպանությունը քսաներորդ դարի: Մի ամբողջ ժողովուրդ, 1915 թվականին, տեղահան արվեց իր պատմական հայրենի բնակավայրերից և բնաջնջվեց մահվան ճանապարհների վրա: Ավերակների վերածվեցին նրանց աղոթքի սրբատեղիները, հպարավոր վանքեր ու եկեղեցիներ, պատմական հուշարձաններ հայ դասական ճարտարապետության, կառուցված 5-րդ դարից սկսյալ մինչև 19-րդ դարը:

Այսօր Հայաստանում թե արտասահմանում գրեթե չկա հայ ընտանիք, որ զոհված մի հարազատ չունենա 1915-ի ցեղասպանության օրերին: Մեր Եկեղեցին, մեր ժողովուրդը ինչպե՞ս կարող են մոռանալ իրենց անթաղ մեռելներին: Ինչպե՞ս կարող են չաղոթել նրանց անմեղ հոգիների համար: Ինչպե՞ս կարող են դեպի երկինք չբարձրացնել իրենց խղճի ազերսը ի խնդիր արդարության:

Ահա խորհուրդը այս հուշարձանի, ահա պատգամը մեր նահատակների:

Այս հուշարձանը, կանգնեցված հյուրընկալ ֆրանսիական հողի վրա, այստեղ, Ալֆորվիլ քաղաքի հրապարակում, մեծահոգի հրամանովը քաղաքագլուխ և նախարար տիար Ժոզեֆ Ֆրանչեսկիի, խորհրդանշում է նաև ասպետական Ֆրանսիայի և նրա կառավարության մարդասիրական և հայապաշտպան զգացումները, որ դեռևս խաչակրաց դարաշրջանից դրսևորվել են բազում անգամներ պատմության ընթացքում:

Հայերը, և ոչ միայն Ֆրանսիայի քաղաքացիները, այլև բոլոր հայերը աշխարհում, մասնավոր համակրանք են տածում Ֆրանսիայի հանդեպ, մասնավոր սեր դեպի ֆրանսական բյուրեղյա լեզուն ու գրականությունը և հիացմունք՝ պատմականորեն նվիրագործված Ֆրանսիայի մարդասիրական ոգու նկատմամբ, որ մեր օրերին էլ ճառագայթում է՝ խաղաղության, արդարության և ազատության իդեալների հռչակումով:

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու, ես շնորհակալություն եմ հայտնում ֆրանսիական Հանրապետությանն ու նրա կառավարությանը, հույժ ուշադիր և բարյացակամ վերաբերմունքի համար հանդեպ Ֆրանսիայի հայ եկեղեցական համայնքների և նրանց կրթական ու մշակութային հաստատությունների:

Ինձ համար հոգեկան մեծ մխիթարություն է, որ այստեղ մեր Եկեղեցու բոլոր զավակները, իրենց բնակած այս սքանչելի երկրի նկատմամբ տոգորված են խոր երախտագիտությամբ, մնալով միշտ հավատարիմ ու շինարար քաղաքացիները ֆրանսիական հայրենիքի:

Այս խաչքար-հուշարձանը՝ ահա մի վկայություն ևս այս ճշմարտությունների:

Եվ մի վկայություն ևս հայ ժողովրդի արդար դատի ճանաչման:

Այս զգացումներով և խոհերով ողջունում եմ կառուցումը այս հուշարձանի և իմ հարգալից շնորհակալությունն եմ հայտնում տիար նախարար Ժոզեֆ Ֆրանչեսկիին, քաղաքագլուխ հայրը Ալֆորվիլի և մեծ բարեկամը Հայ Եկեղեցու ու ժողովրդի:

Միշտ լույս և օրհնություն փառքերի երկիր Ֆրանսիային:

«Զխաղաղութեան վեհետ երթայք ընդ ամենեսին և զսրբութեան» և «եղբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ» (Եբր. ԺԲ 14, ԺԳ 1): Ամեն:

Հավարտ Իր խոսքի Վեհափառ Հայրապետը տիար Ժոզեֆ Ֆրանչեսկիի հետ միասին կատարում է խաչքար-հուշարձանի հանդիսավոր բացումը:

Հավարավոր ներկաների հուպախառն հայացքների տակ և որոտընդոստ ծափահարությունների ներքո իջեցվում է հուշարձանը ծածկող շուշանաթույր շղարշը և իր ամբողջ վեհությամբ վեր է հառնում Ալպրիլյան Եղեռնի զոհերին նվիրված փառահեղ խաչքար-հուշարձանը: Հուշարձանի խաչքարը պատրաստվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և գործն է քանդակող վարպետ Մաքսիմ Ղապարյանի: Հուշարձանի պատվանդանին հայերեն և ֆրանսերեն լեզուներով գրված է հետևյալ արձանագրությունը.

«Ի ՅԻՇԱՏԱԿ ՄԵԿՈՒԿԵՍ ՄԻԼԻՈՆ ՀԱՅԵՐՈՒՆ, ՈՐՈՆՔ ԶՈՀ ԵՂԱՆ ԹՈՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ 1915-ԻՆ ՀՐԱՀԱՆԳԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ»:

Հուշարձանի հանդիսավոր բացումից հետո տեղի է ունենում Մեծ Եղեռնի հայ նահատակներին նվիրված հոգեհանգստյան արարողություն՝ բարձր նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի: Այնուհետև նորաբաց հուշարձանի առջև կետեղվում են բազմաթիվ ծաղկեպսակներ՝ որպես հայ հա-

վառացյալ հոգիների հարգանքի անմնացորդ սուրբ Եղեռնի զոհերի անթառամ հիշատակին:

Վեհափառ Հայրապետի «Հոգւոց»-ից հետո Ալֆորվիլի հայ վարժարանի սաները խրոխտ շեշտով երգում են «Զարի՛ր, Լառ՛» երգը:

Հանդիսությունն ավարտված է:

Ինչպես հետևյալ օրը նշել էր Ֆրանսիայի հայկական թերթերից մեկի թղթակիցը՝ «Հուշարձան մը ևս կկանգներ օտար ափերուն, հիշեցնելու համար աշխարհին, որ 1915-ին ահավոր բան մը կատարված է հոն՝ Արևմտյան Հայաստան, իր հողերուն վրա խաղաղ ու շինարար աշխատանքով ապրող ժողովուրդի մը դեմ»:

*

* *

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով առաջնորդվում է Պեր-Լա Շեզի գերեզմանատուն՝ աղոթելու Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց առաջնորդ նորոգ հանգուցյալ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի հոգու խաղաղության համար: